ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 02 >> 07 2013թ. N: 155-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ- ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված <<Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման>> կարգի 5-րդ և 7-րդ կետերի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում իրականացվող <<Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում>> ծրագրի շրջանակներում 2013 թվականի հուլիսի 12-ին Շիրակի մարզի Առափի համայնքի տարածքում անցկացնել մրցույթ- ուսումնավարժություն:
2. Մրցույթ-ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ս. Պետրոսյանին:
3. Մրցույթ-ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Առափի, Ազատան, Անուշավան, Արեգնադեմ, Բենիամին, Մեծ Մանթաշ, Մեծ Սեպասար, Նոր Կյանք, Կապս, Շիրակ, Սառնաղբյուր, Պեմզաշեն, Փանիկ և Քեթի համայնքների համայնքային արձագանքման կամավորական թիմերը.

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը, վարչության պետ Կ. Բաբակեխյան.

3)Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը, վարչության պետ Հ. Հովհաննիսյան.

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունը, վարչության պետ Կ. Աբրահամյան.

5) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը, վարչության պետ Մ. Սարիբեկյան:

Իսկականի հետ ճիշտ է

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ